

**Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

2019 թվականի 3 եռամսյակում իրականացված միջոցառումների ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ (աճողական)  
Ձիկատար ԲԿ ՊՈԱԿ

(հազար դրամ)

Ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումը	Բյուջեային ծավալների տնտեսագիտական դասավորման հոդվածների NN	Պետության կողմից տրվող հատկացումների հաշվին ստացվող եկամուտների և իրականացվող ծախսերի			Պարզաբանումներ և բացատրություններ ծախսման նպատակի վերաբերյալ
		Հաստատված նախահաշվի ցուցանիշները	Փաստացի կատարողականը	Գերաձախս կամ թերիրացում (փակագծերում գերաձախս, դրական նշանով թերիրացում)	
1	2	3	4	5=3-4	6
Ա. ՄԻՋՈՑՆԵՐԻ՝ ԴԻՏԱՐԿՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴԸ				0,0	
Բ. ԴԻՏԱՐԿՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՍՏԱՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ (տող1+տող2+տող3) այդ թվում՝		11702,9	11702,9	0,0	
1. Դրամաշնորհներ, ընդամենը, որից՝		11702,9	11702,9	0,0	
1 1 Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ				0,0	
1 2 Դրամաշնորհներ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից		11702,9	11702,9	0,0	
2. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ստացվող սուբսիդիաներ				0,0	
3. Այլ եկամուտներ, որից՝		0,0	0,0	0,0	
3 1 Կազմակերպության հաշվեկշռում հաշվառվող գույքի (բացառությամբ հողի) վարձակալությունից				0,0	
3 2 Կազմակերպության տնօրինմանը հանձնված հողի վարձակալությունից				0,0	

1	2	3	4	5=3-4	6
3.3 Եկամուտներ ապրանքների մատակարարումից և/կամ ծառայությունների մատուցումից ընդամենը, այդ թվում՝		0,0	0,0	0,0	
- ծառայությունների մատուցումից				0,0	
- ապրանքների մատակարարումից կամ իրագումից				0,0	
- այլ եկամուտներ				0,0	
<b>Գ. ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող1+տողԲ)</b>	x	11702,9	11702,9	0,0	
<b>Դ.ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող1+տող2+տող3) այդ թվում՝</b>	x	15603,8	10690,5	4913,3	
<b>Դ1.Կազմակերպության աշխատողների ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ՝ ԸՆԴԱՄԵՆԸ, այդ թվում՝</b>	x	13769,7	9511,3	4258,4	
<b>Դ1 1 Աշխատանքի վարձատրություն</b>	x	13769,7	9511,3	4258,4	
-Աշխատողների աշխատավարձեր և հավելվածարձեր	4111	13769,7	9511,3	4258,4	
-Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	4112			0,0	
<b>Դ2 Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում</b>	x	1834,1	1179,2	654,9	
<b>Դ2.1. Շարունակական ծախսեր</b>		1115,0	575,1	539,9	
-գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր	4211			0,0	
-էներգետիկ ծառայություններ	4212	820,0	381,6	438,4	
-Կոմունալ ծառայություններ	4213			0,0	
-Կապի ծառայություններ	4214			0,0	
-Ապահովագրական ծախսեր	4215			0,0	
-Գույքի և սարքավորումների վարձակալություն	4216	295,0	193,5	101,5	
-Այլ ծախսեր	4217			0,0	
<b>Դ2.2 Գործուղումների և շրջագայության ծախսեր</b>	x	230,0	115,0	115,0	
-Ներքին գործուղումներ	4221	230,0	115,0	115,0	
-Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	4222			0,0	
-Այլ (գործուղման հետ կապված) տրանսպորտային ծախսեր	4229			0,0	
<b>Դ2.3. Պայմանագրային ծառայությունների ձեռքբերում</b>	x	0,0	0,0	0,0	
-Վարչական ծառայություններ	4231			0,0	
-Համակարգային ծառայություններ	4232			0,0	
-Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ	4233			0,0	
-Տեղակատվական ծառայություններ	4234			0,0	
-Կառավարչական ծառայություններ	4235			0,0	
- Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ	4236			0,0	
-Ներկայագուցակային ծախսեր	4237			0,0	
-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239			0,0	
<b>Դ2.4. Այլ մասնագիտական ծառայությունների ձեռք բերում</b>	x	0,0	0,0	0,0	
-Մասնագիտական ծառայություններ	4241			0,0	

1	2	3	4	5=3-4	6
<b>Դ2.5. Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր)</b>	x	0,0	0,0	0,0	
-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251			0,0	
-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	4252			0,0	
<b>Դ2.6. Նյութեր</b>	x	489,1	489,1	0,0	
-Գրասենյակային նյութեր և հագուստ	4261			0,0	
-Գյուղատնտեսական ապրանքներ	4262	137,1	137,1	0,0	
-Վերապատրաստման և ուսուցման նյութեր	4263			0,0	
-Տրանսպորտային նյութեր	4264	352,0	352,0	0,0	
-Շրջակա միջավայրի պաշտպանության և գիտական նյութեր	4265			0,0	
-Առողջապահական և լաբորատոր նյութեր	4266			0,0	
-Կենդանի և հանրային սննդի նյութեր	4267			0,0	
-Հատուկ նպատակային այլ նյութեր	4269			0,0	
<b>Դ3 ԱՅԼ ԾԱԽՍԵՐ</b>	x	0,0	0,0	0,0	
<b>Դ3.1 Նվիրատվություններ ոչ կառավարչական (հասարակական) կազմակերպություններին</b>	x			0,0	
<b>Դ3.2 Բյուջեներ կատարվող վճարումներ</b>	x	0,0	0,0	0,0	
<b>Դ3.2.1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջե</b>		0,0	0,0	0,0	
ստ թվում					
-Հարկեր ընդամենը, այդ թվում՝	4822	0,0	0,0	0,0	
ԱԱՀ	x			0,0	
Շահութահարկ	x			0,0	
Նշել ռստ տեսակների	x			0,0	
Այլ հարկեր (նշել տեսակը)	x			0,0	
-Պարտադիր վճարներ, ընդամենը, այդ թվում՝	4823	0,0	0,0	0,0	
նշել ռստ տեսակների				0,0	
նշել ռստ տեսակների				0,0	
նշել ռստ տեսակների				0,0	
<b>Դ3.2.2. Համայնքների բյուջեներ</b>		0,0	0,0	0,0	
-Հարկեր ընդամենը, այդ թվում՝	4822	0,0	0,0	0,0	
Գույքահարկ	x			0,0	
ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿ	x			0,0	
նշել ռստ տեսակների	x			0,0	
-Պարտադիր վճարներ, ընդամենը, այդ թվում՝	4823	0,0	0,0	0,0	
նշել ռստ տեսակների	x			0,0	
նշել ռստ տեսակների	x			0,0	
նշել ռստ տեսակների	x			0,0	
<b>Դ3.3 Դատարանների կողմից նշանակված տույժեր և տուգանքներ</b>	x	0,0	0,0	0,0	
-Դատարանների կողմից նշանակված տույժեր և տուգանքներ	4831			0,0	
<b>Դ3.4. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ</b>	4861	0,0	0,0	0,0	
նշել ռստ տեսակների	x			0,0	
նշել ռստ տեսակների	x			0,0	

1	2	3	4	5=3-4	6
Նշել ըստ տեսակների	x			0,0	
Նշել ըստ տեսակների	x			0,0	
Նշել ըստ տեսակների	x			0,0	
Նշել ըստ տեսակների	x			0,0	
Նշել ըստ տեսակների	x			0,0	
Նշել ըստ տեսակների	x			0,0	
Նշել ըստ տեսակների	x			0,0	
Նշել ըստ տեսակների	x			0,0	
Ե. ԸՆԴԱՄԵՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՎԵԼՈՒՐԴ (ՊԱԿԱՍՈՒՐԴ) ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ (տող Գ -տող Դ)		(3900,9)	1012,4	(4913,3)	
Զ. ԶՈՒՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻՑ (տող Զ2 - տող Զ1)		0,0	0,0	0,0	
Զ1. Կապիտալ ակտիվների ձեռքբերում այդ թվում՝	x	0,0	0,0	0,0	
Զ1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	x	0,0	0,0	0,0	
-Շենքերի և շինությունների ձեռք բերում	5111			0,0	
-Շենքերի և շինությունների կառուցում	5112			0,0	
-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113			0,0	
-Տրանսպորտային սարքավորումներ	5121			0,0	
-Վարչական սարքավորումներ	5122			0,0	
-Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129			0,0	
-Աճեցվող ակտիվներ	5131			0,0	
-Ոչ նյութական հիմնական միջոցներ	5132			0,0	
-Գեոդեզիական-քարտեզագրական ծախսեր	5133			0,0	
-Նախագծանախահաշվային աշխատանքներ	5134			0,0	
Զ1.2. ՈՉ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ	x	0,0	0,0	0,0	
-Հող	5411			0,0	
-Ընդերքային ակտիվներ	5421			0,0	
-Այլ բնական ծագում ունեցող ակտիվներ	5431			0,0	
-Ոչ նյութական ոչ արտադրական ակտիվներ	5441			0,0	
Զ2. Կապիտալ ակտիվների վաճառքից մուտքեր	-x			0,0	
Ե. ԸՆԴԱՄԵՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՎԵԼՈՒՐԴ (ՊԱԿԱՍՈՒՐԴ) (տող Ե + տող Զ)	x	(3900,9)	1012,4	(4913,3)	

Տնօրենի \_\_\_\_\_

Գլխավոր հաշվապահի \_\_\_\_\_ Արուսյան



## Հաշվետվություն

«Զիկատար» բնապահպանական կենտրոն» ՊՈԱԿ-ի «Զիկատար» պետական արգելավայրի ՀՀ 2019 թվականի պետական բյուջեյի «պահպանության ծառայություններ» ծրագրի 2019 թվականի 9 ամիսներում իրականացված աշխատանքների

Հիմք ընդունելով «Զիկատար» բնապահպանական կենտրոն» ՊՈԱԿ-ի «Զիկատար» պետական արգելավայրի ՀՀ 2019 թվականի պետական բյուջեյի «պահպանության ծառայություններ» ծրագրի 2019 թվականի իրականացման նպատակով ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության աշխատակազմի հետ կնքված 2019 թվականի փետրվարի 14-ի N ՀՀ-ԲՆ-ԴՇ-19/09 պայմանագիրը, 2019 թվականի 9 ամիսների ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. Բնական էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության ու բնության ժառանգության պահպանություն:

«Զիկատար» պետական արգելավայրի, ընդհանուր մակերեսով 150 հա տարածքներում, իրականացվել են պահպանության ընդհանուր միջոցառումներ, պարբերաբար, համապատասխան մասնագետների մասնակցությամբ, կազմակերպվել են շրջայցեր և արգելավայրի վիճակի ու խնդիրների վերաբերյալ քննարկումներ:

Կազմակերպության աշխատակիցների կողմից շարունակվել է արգելավայրի՝ նախորդ տարում սկսված էկոտորիստական ենթակառուցվածքների բարելավման աշխատանքները: Արգելավայրի տարածքում թարմացվել են արգելավայրի ռեժիմի պահպանման համապատասխան ցուցատախտակներ: Շարունակվել են էկոտորիստական ենթակառուցվածքների բարեկարգումը, մշակվել են նոր հետիոտնային արահետներ: Տուրիստական գործակալությունների հետ շարունակական համագործակցության շնորհիվ՝ «Զիկատար» պետական արգելավայր են այցելել անտառագետներ և անտառտերեր Ավստրիայից և Գերմանիայից:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում, կազմակերպության աշխատակիցների կողմից, իրականացվել է արգելավայրի ցանկապատի և ջրագծի վնասված հատվածների վերանորոգման աշխատանքներ:

Հարակից համայնքների բնակչության շրջանում իրականացվել են էկոլոգիական իրազեկության բարձրացման աշխատանքներ: Շարունակվում է համագործակցությունը Կողբի գեղարվեստի դպրոցի և միջնակարգ դպրոցների հետ՝ թեմատիկ ֆիլմերի ցուցադրումը և քննարկումները: Էկոդաստիարակության և էկոգիտակցության բարձրացման, ինչպես նաև բնաճանաչողության մակարդակի բարձրացման նպատակով կազմակերպվել է հերթական «Էկոկողմնորոշում» մրցույթը: Մրցմանը մասնակցել են հարակից համայնքների, Երևանից և այլ մարզերից ժամանած հյուրեր, ինչպես նաև Green Camp Armenia նախաձեռնության անդամներ:

«Զիկատար» բնապահպանական կենտրոն» ՊՈԱ կազմակերպության աշխատակիցների կողմից պարբերաբար իրականացել է արգելավայրի, արգելավայր տանող ճանապարհի և Կողբ համայնքի որոշակի հատվածների մաքրման աշխատանքներ:

Համապետական շաբաթօրյակ-ծառատունկի շրջանակներում, բնապահպանական կենտրոնի աշխատակիցների կողմից իրականացվել են բնապահպանական կենտրոն տանող

ճանապարհամերձ հատվածների մաքրման աշխատանքներ: Նույն օրը արգելավայրի տարածքում իրականացվել է ծառատունկ:

Քաղաքացու օրվա կապակցությամբ, Կողբի թիվ 2 միջնակարգ դպրոցի այգում իրականացվել է ծառատունկ: Նույն օրը Կողբի գեղարվեստի դպրոցի դահլիճում կազմակերպվեց բնապահպանական ֆիլմի ցուցադրում և քննարկումներ:

Կենսաբազմազանության միջազգային օրվա կապակցությամբ, «Զիկատար» պետական արգելավայրի տարածքում, Կողբի թիվ 1 միջնակարգ դպրոցի մասնակցությամբ, կազմակերպվել է թեմատիկ ֆիլմի դիտում և քննարկումներ բնության գրկում:

Շրջակա միջավայրի և բնապահպանի օրվա կապակցությամբ, «Զիկատար» պետական արգելավայրի տարածքում կազմակերպվել է բնապահպանական ֆիլմի ցուցադրում, քննարկումներ և գեղանկարչական միջոցառումներ:

## 2. «Զիկատար» պետական արգելավայրի գիտական ուսումնասիրություններ:

Գիտական ուսումնասիրությունների շրջանակներում՝ փորձահրապարակներում իրականացվել են ուսումնասիրություններ ընթացիկ աճի, բնական վերականգնման և անտառգնահատման այլ ցուցանիշների վերաբերյալ: Իրականացվել են էկոհամակարգային ծառայությունների գնահատման ուսումնասիրություններ:

## 3. Հակահրդեհային միջոցառումներ:

«Զիկատար» պետական արգելավայրի առավել հրդեհավտանգ տարածքներում իրականացվել է հողի հակահրդեհային հանքայնացում՝ ձեռքով /հողի վերին շերտի հեռացում/: Մշտապես ապահովվել է արհեստական լճակների ջրի պաշարի առավելագույն քանակությունը: Իրականացված աշխատանքների շնորհիվ տարածքը դարձել է ոչ հրդեհավտանգ: Հաշվետու շրջանում հրդեհի դեպքեր չեն արձանագրվել:

## 4. Արգելավայրի տարածքում հերթական ստուգումների անցկացման միջոցառումներ:

Արգելավայրի տարածքում արգելավայրի աշխատակիցների կողմից իրականացվել են հերթական ստուգումներ, որոնց վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրություն: Ստուգման արդյունքներով ծառահատման, բնական վերաճի ոչնչացման և անտառխախտման դեպքեր չեն արձանագրվել:

## 5. Կենսաբազմազանության պահպանության, հարստացման և գործնական ուսուցումների կազմակերպման նպատակներով հիմնված տնկարանային տնտեսության տարածքում իրականացվել են տնկանյութի խնամքի աշխատանքներ:

Ներկայումս տնկարանային տնտեսության տարածքում առկա է շուրջ 6000 սերմնաբուսակ և տնկանյութ: Տնկարանային տնտեսությունում շարունակվում է ծնեբեկի մշակումը:

Իրականացված միջոցառումների արդյունքում ապահովվել է պետական արգելավայրի կայուն կառավարումը:

«Ջիկատար» բնապահպանական կենտրոն» ՊՈԱԿ-ի «Ջիկատար» պետական արգելավայրի տարածքում 2019 թվականի 9 ամսում իրականացված աշխատանքներ

h/ h	Իրականացվելիք միջոցառումը					
	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնա-ժամկետը	Պահանջվող գումարը /հազ. դրամ/
1	Բնական էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության ու բնության ժառանգության պահպանություն	Պետական արգելավայրի տարածքներում և պահպանման գոտու տարածքներում՝ ա)պահպանության ընդհանուր միջոցառումների իրականացում բ)հարող բնակավայրերի բնակչության շրջաններում էկոլոգիական իրազեկություն, էկոդաստիարակություն	Պահպանության միջոցառումներ, աշխատակիցների կողմից բացատրական և քարոզչական միջոցառումների կազմակերպում և իրականացում, արդյունքների ամփոփում ու վերլուծություն	Պատշաճ պահպանություն, հանրության իրազեկության պատշաճ մակարդակի ապահովում	31.12. 2019 թ.	10267.4
2	Գիտական ուսումնասիրություններ	Փորձահրապարակներում իրականացվել են մոնիթորինգային դիտարկումներ:  Իրականացվել են էկոհամակարգային ծառայությունների գնահատման ուսումնասիրություններ:	Փորձահրապարակներում կատարվել են անտառի գնահատման հիմնական ցուցանիշների վերաբերյալ ուսումնասիրություններ:	Անտառի վիճակի բարելավում, աճի և արտադրողականության բարձրացում	31. 12. 2019 թ.	100,0
3	Հակահրդեհային միջոցառումներ	Հրդեհային անվտանգության ապահովում	Հողի վերին շերտի հանքայնացում՝ ձեռքով, արհեստակա ն լճակներում ջրի պատշաճ պաշարի ապահովում	Հրդեհային անվտանգության ապահովում	15. 11. 2019 թ.	100,0
4	Արգելավայրի տարածքում հերթական և վերստուգիչ ստուգումների իրականացման միջոցառումներ	Արգելավայրի անտառային տարածքներում անտառխախտումների հայտնաբերման նպատակով ստուգումների իրականացում	Իրականացված ստուգումներ	Ապօրինի հատումների կանխարգելում, բացահայտում	31. 12. 2019 թ.	50,0

5	Կենսաբազմազանության պահպանության, հարստացման և գործնական ուսուցումների կազմակերպման նպատակներով հիմնված տնկարանային տնտեսության դպրոց հողամասում տնկանյութի աճեցում և խնամք	Անտառային, գեղազարդ և անտառային պտղատու ծառաթփատեսակների տնկիների աճեցում	Տնկարանի հողի մշակություն /մաքրում, վար/, սերմերի ցանք և խնամք	Ինամված տնկարան, որակյալ տնկիներ	15. 11. 2019 թ.	1185.5
	Ընդամենը					11702.9